

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-320-Ն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «, հատուկ քննչական ծառայության» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրը:

**ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ**

**«ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ**

**Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-Ն որոշումից (այսուհետ՝ Ռազմավարություն) և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի 650-Լ որոշման (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) 49.2-րդ կետի պահանջից:

### **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

2019 թվականի նոյեմբերի 20-ին ձևավորվել է կոռուպցիայի դեմ պայքարում ինստիտուցիոնալ համակարգի բաղադրատարրերից առաջինը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով): Կոռուպցիայի դեմ պայքարին միտված գործողությունների արդյունավետությունն ապահովելու համար Հանձնաժողովի կայացմանն ու գործունեությանը զուգահեռ անհրաժեշտ է ապահովել նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառնությունը և անկախության երաշխիքներով օժտված մասնագիտացված մարմնի առկայությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձնահատկություններով պայմանավորված՝ հետաքննության և նախաքննության գործառնությունները, կոռուպցիոն հանցագործություններով օպերատիվ-հետախուզական գործողությունները իրականացվում են տարբեր մարմինների կողմից, ինչն իր հերթին հանգեցնում է կոռուպցիոն հանցագործությունների քննության ապակենտրոնացվածության:

Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով միջազգային մի շարք կառույցների, ստանձնել է կոռուպցիոն իրավախախտումների բացահայտման գործող կառուցակարգեր ստեղծելու պարտավորություն:

Այսպես, Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան» (այսուհետ՝ Կոնվենցիա), որն ընդունվել է 2003 թվականին և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր է դարձել 2007 թվականից, պարունակում է գործուն մեխանիզմներ, որոնք վերաբերում են նաև կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների ստեղծմանը և դրանց լիազորությունների շրջանակին:

Կոնվենցիայի 36-րդ հոդվածով կոռուպցիայի բացահայտման մարմինների համար սահմանվել են որոշակի սկզբունքային դրույթներ:

Կոնվենցիայի 36-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝ իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառնությունները առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների

աշխատակիցները իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և պաշարներով:<sup>1</sup>»

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) շրջանակներում գործող Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցը Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացնում է անդամ պետությունների հակակոռուպցիոն համակարգի գնահատում: Սույն ցանցին անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը: Նշված նախաձեռնության շրջանակում 2018 թվականին իրականացվել է Հայաստանի Հանրապետության 4-րդ փուլի գնահատումը<sup>2</sup>, որով ևս անդրադարձ է կատարվել Հակակոռուպցիոն իրավապահ մարմնի բացակայության հարցին: Մասնավորապես, զեկույցում անդրադառնալով այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն գործերի քննությունն իրականացվում են տարբեր մարմինների կողմից, արձանագրվում է, որ կոռուպցիոն գործերի քննությամբ դրական տեղաշարժ տեղի չի ունեցել և որ իրավապահ մարմինները ավելի շատ հակված են իրականացնելու քննություն միայն փոքր կոռուպցիոն հանցագործություններով: Ձեկույցով կարևորվում է կոռուպցիոն իրավապահ մարմիններին անկախության գործունեության քննություն անհրաժեշտությունը: Գնահատման արդյունքների ամփոփման հիման վրա խորհուրդ է տրվում ապահովել հակակոռուպցիոն իրավապահ մարմինների ղեկավարների թափանցիկ և մրցակցային ընտրություն՝ թեկնածուների արժանիքների և մասնագիտական որակների հաշվառմամբ: Կարևորվում է նաև հակակոռուպցիոն իրավապահ մարմիններին համապատասխան միջոցներով ապահովելու հանգամանքը և աշխատակիցների մասնագիտացվածությունը:

Այսպիսով, կարելի է առանձնացնել այն սկզբունքային դրույթները, որոնք պետք է բնորոշ լինեն կոռուպցիայի դեմ պայքար մղող մարմիններին: Նման մարմինները պետք է լինեն անկախ, զերծ մնան անհարկի ազդեցությունից, օժտված լինեն պատշաճ նյութատեխնիկական պայմաններով, իսկ աշխատակիցները՝ ունենան բարձր որակավորում:

---

<sup>1</sup> Տե՛ս բնօրինակը

[https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/Convention/08-50026\\_E.pdf](https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/Convention/08-50026_E.pdf)

<sup>2</sup> <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf> Էջ 14,

Հարկ է նշել նաև, որ միջազգային գործընկեր կազմակերպություններն իրենց հերթին բազմիցս բարձրացրել են նշված հարցը՝ պնդելով, որ Հայաստանում կոռուպցիոն հանցագործությունների քննության ապակենտրոնացվածությունը կոռուպցիոն հանցագործությունների արդյունավետ քննության հիմնական մարտահրավերներից է:

Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառնություն օժտված մասնագիտացված մարմին, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի երկրորդ բաղադրատարրն է: Այն արդեն իսկ ստեղծված կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, զուգահեռաբար ստեղծվող հակակոռուպցիոն դատարանի և ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության հետ ամբողջացնելու է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը:

#### **Առաջարկվող կարգավորման բնույթը.**

Հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև ՀՀ կառավարության Գործունեության ծրագիրը և Հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ Նախագծով առաջարկվում է ստեղծել կոռուպցիոն բնույթի հանցագործությունները քննող մասնագիտացված մարմին՝ Հակակոռուպցիոն կոմիտե:

Նախ, անդրադառնալով միջազգային փորձին՝ հարկ է նշել, որ մի շարք պետություններ ստեղծել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման և քննության գործառնություն օժտված մարմիններ, որոնք, ընտրված մոդելների տարբերություններով հանդերձ, առաջնորդվում են միջազգայնորեն ընդունված սկզբունքներով:

Այսպես, **Ուկրաինայում** գործում է Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոն: Համաձայն ազգային հակակոռուպցիոն բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) մասին օրենքի<sup>3</sup> առաջին հոդվածի՝ Բյուրոն պետական իրավապահ մարմին է, որը պատասխանատու է իր իրավասության հետ կապված կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, քննության, բացահայտման, ինչպես նաև կանխարգելման համար: Բյուրոյի ղեկավար կազմն ու անդամները ընտրվում են մրցութային խորհրդի կողմից՝ բաց մրցույթի արդյունքում: Միաժամանակ Բյուրոյի գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով այն իր գործունեության մասին հաշվետվություններ է հրապարակում

<sup>3</sup> <https://zakon.rada.gov.ua/laws/show/1698-18/ed20200703#Text>

և հասարակությանը տեղեկացնում է իր կատարած աշխատանքի արդյունքների մասին: Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետություն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Բյուրոյի աշխատակիցները իրականացնում են և՛ օպերատիվ-հետախուզական գործունեություն, և՛ նախաքննություն:

**Լատվիայում** գործում է Կոռուպցիայի կանխարգելման և պայքարի բյուրո<sup>4</sup> (այսուհետ՝ Բյուրո): Վերջինս ունի գործունեության հիմնական երեք ուղղություններ՝ կանխարգելիչ, հետաքննական և կրթական: Բյուրոն իրավասու է կիրառել վարչաիրավական ներգործության միջոցներ՝ օրենքով նախատեսված կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար, ինչպես նաև իրականացնել հետաքննական և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ այն պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնք կասկածվում են կոռուպցիոն բնույթի հանցագործություններ կատարելու մեջ:

**Կոսովոյում** կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության մարմինը Հակակոռուպցիոն գործակալությունն<sup>5</sup> է: Գործակալությունն ունի երեք բաժին՝ քննչական վարչություն, կոռուպցիայի կանխարգելման վարչություն և կառավարման վարչություն: Գործակալությունն իրավունք ունի նաև կոռուպցիոն հանցագործություններով հարուցված գործերով իրականացնել հետաքննություն:

Իսկ **Սլովակիայում** գործում է Կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոն, որը ստեղծվել է 2004 թվականին: Կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոն գործում է Ոստիկանության ուժերի ղեկավարության ներքո: Այն հիմնականում հետաքննական գործակալություն է, սակայն ունի նաև կոռուպցիայի կանխարգելման լիազորություններ:

**Լիտվայում** գործում է Հատուկ քննչական ծառայությունը<sup>6</sup>: Ծառայությունը անկախ մարմին է, որը հաշվետու է միայն Նախագահի և Խորհրդարանի առջև: Սույն մարմինը գործում է «Հատուկ քննչական ծառայության» մասին օրենքի հիման վրա: Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն Ծառայությունը ունի հետևյալ գործառնությունները.

1. Իրականացնել օպերատիվ-հետախուզական աշխատանքներ կոռուպցիայի հետ կապված հանցագործությունները բացահայտելու և կանխելու ուղղությամբ.
2. Իրականացնել կոռուպցիոն բնույթի հանցագործություններով նախաքննություն

<sup>4</sup> <https://www.iap-association.org/NACP/Anti-Corruption-Models>

<sup>5</sup> [https://www.akk-ks.org/en/luftimi\\_i\\_korrupsionit/162/zbatimi-i-ligjit/162](https://www.akk-ks.org/en/luftimi_i_korrupsionit/162/zbatimi-i-ligjit/162) “Anti-Corruption Agency”

<sup>6</sup> <https://www.stt.lt/en/legal-information/laws/4975>

3. Օրենքով սահմանված կարգով համագործակցել այլ իրավապահ մարմինների հետ

4. հավաքել, պահել, վերլուծել և ամփոփել կոռուպցիայի և հարակից սոցիալական երևույթների վերաբերյալ տեղեկատվություն

5. Իրավապահ այլ հաստատությունների հետ համատեղ իրականացնում են հանցագործությունների վերահսկողության և կանխարգելման գործողություններ

Ծառայությունը տարեկան և կիսամյակային հաղորդումներ է ներկայացնում Խորհրդարան: Գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով պարբերաբար հանդես է գալիս հրապարակումներով և զեկույցներով, սերտ համագործակցում է քաղաքացիական հասարակության և նրանց ներկայացուցիչների հետ:

**Ռումինիայում** գործում է Ազգային հակակոռուպցիոն ծառայությունը<sup>7</sup>, որը իրականացնում է կոռուպցիոն բնույթ ունեցող իրավախախտումների ուսումնասիրություն: Ծառայության իրավասության ներքո են գտնվում կոռուպցիոն հանցագործությունները քննությունը: Օրենքով Ծառայությանը տրվում է մի շարք հատուկ լիազորություններ.

- Գաղտնի հսկողության
- կապի միջոցների հսկողության
- գաղտնի հետաքննության
- ֆինանսական տվյալների և տեղեկատվական համակարգերի հասանելիության
- ֆինանսական գործարքների մոնիթորինգի և այլն:

**Սինգապուրում** գործում է Կոռուպցիոն գործերի հետաքննության բյուրոն<sup>8</sup> (CPIB), որը հիմնադրվել է 1952 թվականին՝ որպես անկախ հակակոռուպցիոն գործակալություն: Դրա նպատակն է քննել և կանխել կոռուպցիան պետական և մասնավոր հատվածներում: Բյուրոյի հիմնական գործառնությունը կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ բողոքներ ստանալն ու քննելն է:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի՝ Բյուրոն ունի հետևյալ լիազորությունները.

1. հանցագործությունների քննության լիազորություն
2. հետաքննության լիազորություն

<sup>7</sup> <https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf> էջ 86

<sup>8</sup> <https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf> էջ 52

### 3. հետախուզման և բռնագրավման լիազորություններ:

Նման մարմիններ գործում են նաև Բելգիայում՝ Կոռուպցիայի կանխարգելման կենտրոնական գրասենյակը, Խորվաթիայում՝ Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության կանխարգելման գրասենյակը, Մալթայում՝ Կոռուպցիայի դեմ մշտական հանձնաժողովը<sup>9</sup>:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով այն համգամանքը, որ կոնկրետ երկրի փորձը կիրառելիս պետք է հաշվի առնել նաև այդ երկրի օրենսդրության ընդհանուր տրամաբանությունը, իրավական համակարգի կառուցվածքը և առանձնահատկությունները՝ համաձայն սույն Նախագծով առաջարկվող իրավակարգավորումների՝ Կոմիտեն, որը ստեղծվելու է որպես քննչական մարմին, կազմակերպելու և իրականացնելու է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների մինչդատական քրեական վարույթ: Նաև, հաշվի առնելով այն համգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածի համաձայն քննչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով, նախատեսվում է, որ Կոմիտեն քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծման նպատակով՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնելու է օպերատիվ-հետախուզական գործունեություն: Սույն լիազորությունների ամբողջությունը հնարավորություն է տալու Կոմիտեին իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների ամբողջական և արդյունավետ քննություն:

Հարկ է նշել, որ ի տարբերություն վերոնշյալ մի շարք երկրների, որտեղ կոռուպցիոն բնույթի հանցագործություններով և՛ հետաքննությունը, և՛ օպերատիվ-հետախուզական գործունեությունը, և՛ նախաքննությունը իրականացվում է միևնույն անձի կողմից, հաշվի առնելով Նախագծով կոռուպցիոն հանցագործությունների քննության կենտրոնացվածությունը ապահովելու անհրաժեշտությունը, թեև հետաքննությունը, օպերատիվ-հետախուզական գործունեությունը, նախաքննությունն իրականացվելու են մեկ մարմնի՝ Կոմիտեի կողմից, այնուամենայնիվ, չարաշահումներից խուսափելու, արագ և արդյունավետ քննություն ապահովելու համար դրանք իրականացվելու են տարբեր ստորաբաժանումների կողմից: Միևնույն ժամանակ, Կոմիտեի ինքնավարության ապահովման նպատակով,

<sup>9</sup> <https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf>

նշված գործառույթներն իրականացնող ստորաբաժանումների կառուցվածքը սահմանվելու է Կոմիտեի կողմից:

Կոմիտեի գործունեության արդյունավետության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի վերջինիս կառուցվածքը: Կոմիտեն կազմված է լինելու կառուցվածքային մասնագիտական ստորաբաժանումներից (այդ թվում՝ տարածքային ստորաբաժանումներից) և աջակցող ստորաբաժանումներից: Հակակոռուպցիոն կոմիտեի ստորաբաժանումները բաղկացած են վարչություններից և բաժիններից: Կոմիտեի կազմում գործելու են օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներ:

Կոմիտեի մասնագիտական կազմը համալրվելու է համապատասխան մասնագիտական պատրաստում անցած կադրերի ներգրավման եղանակով:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքների և գործիքակազմի փոխանցումը չի կրելու մեխանիկական բնույթ: Հակակոռուպցիոն կոմիտեի կազմում նշանակումները կատարվելու է մրցութային կարգով:

Մասնավորապես, Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով Կոմիտեի նախագահը կազմավորելու է մրցութային հանձնաժողովը: Ընդ որում, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների աշխատողների մրցութային կարգը եւ պայմանները, հաշվի առնելով վերջիններիս գործունեության առանձնահատկությունը, սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից նշանակված Հակակոռուպցիոն կոմիտեի 3 ծառայող, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջադրած 1 անձ, քաղաքացիական հասարակության 1 ներկայացուցիչ:

Նախագծով առաջարկվող մրցույթը ինքնավար պաշտոնների թեկնածուների ընտրության դեպքում կազմված է հետևյալ փուլերից.

փաստաթղթերի ուսումնասիրության փուլ՝ դիմումը և կից փաստաթղթերը (այսուհետ նաև՝ հայտ) ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, Հանձնաժողովը համադրում է մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկի, համապատասխանությունը սույն օրենքով նախատեսված պահանջներին: Թեկնածուն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ: Սահմանված փաստաթղթերը թերի լինելու դեպքում այդ մասին



հայտատուին տեղեկացվում է նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեկօրյա ժամկետում: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում: Փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջները չբավարարող հայտերի ընդունումը մերժվում է, և դրանք Հանձնաժողովի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքերում, երբ մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

Թեստավորման փուլը անցկացվում է փաստաթղթերի ուսումնասիրության փուլի ավարտից հետո տասնօրյա ժամկետում Հանձնաժողովը փաստաթղթերի ուսումնասիրության փուլը հաղթահարած մասնակիցների համար կազմակերպում է թեստավորման փուլը, որի ընթացքում ստուգվում են մասնակիցների մասնագիտական գիտելիքները: Թեստավորման անցկացման նույն օրը կազմվում և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակվում է թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի օրը և վայրը:

Բարեվարքության ուսումնասիրության փուլ՝ Հանձնաժողովը թեստավորման փուլի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

Հարցազրույցի փուլի ընթացքում Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում անցկացնում է հարցազրույց՝ հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունը հարցազրույցն անցկացնելուց առնվազն երեք օր առաջ հրապարակելով իր պաշտոնական կայքէջում: Հարցազրույցի փուլին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան, որին ներգրավում է Հանձնաժողովը: Հարցազրույցի փուլում Հանձնաժողովի անդամները գնահատում են մասնակցի աշխատանքային ձեռքբերումները, վերլուծական կարողությունները, տարբեր իրավիճակներում վարվեցողությունը, պատասխանատվության զգացումը, հաղորդակցման հմտությունները, տվյալ պաշտոնում նշանակվելու նրա շարժառիթը, ակնկալիքները և այդ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական որակները և արժանիքները: Հարցազրույցի ընթացքում մասնակցին կարող են նաև հարցադրումներ կատարվել

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների վերաբերյալ: Մասնակցին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքները ստուգելու նպատակ:

Արդյունքների ամփոփման փուլում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են գնահատման ենթակա հատկանիշները: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր մասնակցին՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: Հարցազրույցի արդյունքում Հանձնաժողովը կազմում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակ, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ ստացած թեկնածուները: Եթե մասնակիցների միավորների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել հաղթողին, ապա անցկացվում է բաց քվեարկություն, որի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է առավելագույն հավասար ձայներ ստացած այս կամ այն թեկնածուի օգտին: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Մրցույթի վերջնական արդյունքները մեկօրյա ժամկետում հրապարակվում են Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Մասնակցի իրավունքները ապահովելու նպատակով Նախագծով ամրագրվել է նաև մրցույթի արդյունքները գրավոր բողոքարկելու հնարավորություն: Մասնակիցը մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո երկօրյա ժամկետում կարող է դրանք գրավոր բողոքարկել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է մեկ օրվա ընթացքում:

Մրցութային կարգով է անցկացվելու նաև Կոմիտեի նախագահի ընտրությունները: Ընդ որում, հիմք ընդունելով միջազգային կառույցների կողմից կատարված դիտարկումները, Նախագծով առաջարկվում է ստեղծել Մրցութային խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ), որում ներառվելու են տարբեր մարմինների ներկայացուցիչներ, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության անդամներ: Մասնավորապես Խորհրդում ներգրավվելու են Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշանակած մեկական թեկնածու և քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցիչ: Խորհրդում ընդգրկվող թեկնածուներին նախագծով առաջադրվում է որոշակի պահանջներ, որը նպատակ է

հետապնդում Խորհրդի կազմում բարձր մասնագիտական և բարոյական հատկանիշներ ունեցող անձանց ներգրավումը: Մասնավորապես, Խորհրդի անդամ բացառությամբ քաղաքացիական հասարակության ներկայացուցչի, կարող է նշանակվել բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ձանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում, բարձր մասնագիտական և բարոյական հատկանիշներ ունեցող, կուսակցական պատկանելիություն չունեցող յուրաքանչյուր ոք, ով ունի քրեական մասնագիտացման դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննիչի, օպերլիազորի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեության առնվազն 5 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 5 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության Խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավվում է նաև երեք միջազգային փորձագետ: Որպես միջազգային փորձագետ կարող են ներգրավվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող անձինք: Միջազգային փորձագետների ներգրավման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Խորհրդի գործունեության թափանցիկությունը ապահովելու համար Խորհրդի նիստերը անցկացվում են բաց: Քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել նիստերին: Խորհրդի նիստերը նաև տեսաձայնագրվում են:

Կոմիտեի նախագահի ընտրությունը իրականացվում է հետևյալ փուլերով.

- 1) փաստաթղթերի ուսումնասիրության փուլ.
- 2) բարեվարքության ուսումնասիրության փուլ.
- 3) հարցազրույցի փուլ.
- 4) արդյունքների ամփոփման փուլ.

Հաշվի առնելով կոռուպցիոն ոլորտի առանձնահատկությունները, կարևորվում է Կոմիտեի բոլոր ծառայողների, այդ թվում՝ Կոմիտեի նախագահին ներկայացվող պահանջները: Նախագծով նախատեսվում է, որ Հակակոռուպցիոն ծառայողի պաշտոն կարող է զբաղեցնել այն անձը, որն ունի Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան, կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած

համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, անցել է պարտադիր գինվորական ծառայություն, տիրապետում է հայերենին, ունի անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով կամ Կառավարության սահմանած կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացություն և այլն: Ընդ որում, կախված զբաղեցրած պաշտոնից՝ Կոմիտեի ծառայողը պետք է բավարարի պաշտոնին ներկայացվող Նախագծով նախատեսված այլ պահանջներին ևս: Օրինակ՝ Կոմիտեի նախագահ կարող է նշանակվել վերոնշյալ պահանջներին բավարարող անձը, որն ունի քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն կամ ունի դատավորի, դատախազի, քննիչի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտներում գործունեության առնվազն 5 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 5 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող, ստաժ: Համապատասխան ոլորտներում աշխատանքային ստաժի պահանջը բխում է կոռուպցիոն բնույթի առանձնահատկություններից: Օրինակ՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեության փորձ ունենալու պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների զգալի հատված ուղեկցվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների օրինականացմամբ:

Նախագծով Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների գործունեության նկատմամբ սահմանված են առավել խիստ պահանջներ: Կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները: Նախագծով հստակորեն նախատեսվել է նշված սահմանափակումների խախտման համար կիրառվող ներգործության միջոցները: Մասնավորապես, Նախագծի համաձայն Կոմիտեի ծառայողի պաշտոնի դադարեցման հիմք է հանդիսանում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները խախտելը: Նշված սահմանափակումների և անհամատեղելիության պահանջների խախտումը հանդիսանում է նաև Կոմիտեի նախագահի լիազորությունների դադարեցման հիմք:

Հակակոռուպցիոն կոմիտեում բարեվարքության համակարգի ներդրումը պայմանավորված է ինչպես ՀՀ կառավարության որդեգրած՝ պետական

կառավարման համակարգում և պետական մարմիններում բարեվարքության բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացմամբ և ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմամբ, այնպես էլ Կոմիտեի գործունեության առանձնահատկություններով: Ինչպես արդեն նշվեց, Կոմիտեում ծառայության անցնելիս Կոմիտեի նախագահը և մյուս ծառայողները անցնում են բարեվարքության ստուգման պարտադիր ընթացակարգ, բացառությամբ Կոմիտեի այն ծառայողների, որոնց անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործությունների լիակատար պահպանմամբ: Բարեվարքության ստուգման գործընթացը ներդրվել է սույն թվականի մարտի 25-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոմիտեն գործում է անկախության և ինքնուրույնության սկզբունքների հիման վրա և իրականացնելու է Կոռուպցիոն հանցագործությունների քննություն, անհրաժեշտություն է առաջանում ներդնել գործուն մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ապահովել կոմիտեի ծառայողների առաքինության և բարեվարքության ընթացիկ գնահատում: Այս տեսանկյունից նախագծով Կոմիտեի նախագահի վրա դրվում է պարտականություն՝ սահմանելու Կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները: Ընդ որում, Կոմիտեի նախագահը իրավասու է ներքին անվտանգության հարցերով ստորաբաժանման միջոցով պարբերաբար իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիոն եղանակներով: Հարկ է նշել, որ պրովոկացիոն տերմինի կիրառումը չպետք է շփոթ առաջացնի քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի հետ, քանի որ Նախագծի 32-րդ հոդվածով առաքինության նման ստուգման համար սահմանվել է ոչ թե քրեական, այլ կարգապահական ներգործության միջոցի կիրառում, իսկ Նախագծի 34-րդ հոդվածի 9-րդ մասի և Քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածով նախատեսված փոփոխություններով բացառվում է հետագայում Կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառումը: Նշված միջոցը կրում է բացառապես Կոմիտեի ծառայողների բարեվարքության և առաքինության ստուգման դեր և կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության: Հարկ է նշել, որ պաշտոնատար անձանց բարեվարքության ստուգման նմանատիպ մեխանիզմ կիրառվում է նաև այլ երկրներում, իսկ միջազգային հակակոռուպցիոն կառույցները բարեվարքության ստուգման

նմանատիպ մեխանիզմի կիրառումը համարում են արդյունավետ: ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից մշակված փաստաթղթերում այս մեխանիզմը նկարագրվում է որպես իրավիճակ, երբ պետական ծառայություն իրականացնող անձը ամենօրյա գործունեության ընթացքում կարող է չարաշահել իր լիազորությունները՝ կաշառք պահանջելու կամ առաջարկվող կաշառքը բարեվարքության ստուգումը իրականացնող անձից վերցնելու միջոցով:<sup>10</sup> Նմանատիպ կարգավորումներ գործում են օրինակ ԱՄՆ-ում<sup>11</sup>, Ուկրաինայում<sup>12</sup> առանց որևէ սահմանադրական խոչընդոտների:

Միաժամանակ, Նախագծում կարգավորվել է Կոմիտեում իրականացվող ծառայության վերաբերյալ հարաբերությունները: Հակակոռուպցիոն կոմիտեում քննչական պաշտոններ զբաղեցնող անձանց (այդ թվում՝ Կոմիտեի նախագահ, տեղակալներ) դեպքում վերջիններս հանդիսանալու են ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ: Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց, ապա այս դեպքում առանձին ծառայության տեսակ չսահմանելը հանգեցնում էր այնպիսի իրավիճակի, որ հանրային ծառայության համակարգում վերջիններս չէին ներառվում, կամ ներառվում էին անորոշ նշմամբ, որ համարվում են պետական ծառայողներ, սակայն այս դեպքում ևս խնդիրներ էին առաջանում, քանի որ պետական ծառայության տեսակները ՀԾ օրենքով սպառիչ թվարկված են: Հատկանշական է, որ ներկայումս բոլոր օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններում առկա են առանձին ծառայության տեսակներ (ոստիկանության ծառայություն, ազգային անվտանգության մարմիններում ծառայություն, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, քրեակատարողական ծառայություն և այլն):

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Նախագծի 3-րդ հոդվածով արտացոլվել են Կոմիտեում իրականացվող ծառայության առանձնահատկությունները: Կոմիտեում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ ոլորտային օրենսդրությունում սահմանվել է, որ պետական ծառայությունն ընդգրկում է նաև Հակակոռուպցիոն կոմիտեում իրականացնող ծառայությունը: Նախագծով նման կարգավորման սահմանումը լուծում է Կոմիտեի առանձնահատկություններով

<sup>10</sup> <https://www.unodc.org/documents/treaties/toolkit/f5.pdf> էջ 205

<sup>11</sup> [https://www.unodc.org/documents/afghanistan/Anti-Corruption/Handbook\\_practical\\_anti-corruption.pdf](https://www.unodc.org/documents/afghanistan/Anti-Corruption/Handbook_practical_anti-corruption.pdf) էջ 91

<sup>12</sup> <https://zakon.rada.gov.ua/laws/show/1698-18/ed20200703#Text>

պայմանավորված, մի շարք պաշտոնների՝ հանրային ծառայության համակարգում ներգրավվածության ապահովման խնդիրը:

Անդրադառնալով Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարձատրությանը՝ հարկ է նշել հետևյալը՝

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում առաջարկվում է սահմանել դրույթ, առ այն, որ ռիսկային առանձնակի բարդություններով, ինչպես նաև հատուկ մասնագիտացմամբ պայմանավորված՝ տարբեր մարմիններում պաշտոններ զբաղեցնող անձինք, կառավարության թույլտվության դեպքում, բացի օրենքով սահմանված պաշտոնային դրույթաչափից և հավելավճարից, կստանան նաև հավելում: Ընդ որում, Հակակոռուպցիոն կոմիտեի դեպքում, որպես գործունեության լրացուցիչ երաշխիք, հավելում ստանալու հնարավորությունը և հավելման չափը սահմանված է օրենքով, իսկ այլ մարմինների եւ պաշտոնների դեպքում կառավարությունն ինքը կորոշի նպատակահարմարությունը:

Նման մոտեցումը հիմնված է ՀՀ սահմանադրության, ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների վրա և հետապնդում է սույն փաստաթղթում ներկայացված իրավաչափ նպատակը: Մասնավորապես,

ՍԴԴ-1443 որոշման շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Վերոնշյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր քննչական մարմինների քննիչների կարգավիճակը, ըստ էության, նույնն է. նրանք իրականացնում են Սահմանադրությամբ քննչական մարմիններին վերապահված գործառույթի (քրեական գործով նախաքննության) իրականացմանն ուղղված մասնագիտական գործունեություն: (...) Վկայակոչված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ Հայաստանի Հանրապետությունում պետական պաշտոններ զբաղեցնող անձանց առնչությամբ իրականացվող պետության սոցիալական քաղաքականությունը, մասնավորապես, վեճի առարկային առնչվող կենսաթոշակի իրավունքի իրացման ոլորտում, ի թիվս այլնի, ունի այն առանձնահատկությունը, որ առանձին կատեգորիայի պաշտոնատար անձանց համար, ելնելով նրանց կարգավիճակի կամ գործառույթների առանձնահատկություններից, օրենսդիրը սահմանել է ավելի բարձր սոցիալական երաշխիքներ և առավել բարենպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք»:

ՄԴՈ-881 որոշման շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ «Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից»:

Այս մոտեցումը բխում է նաև Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 9-ին տրված թիվ 896/2017 կարծիքում արտահայտած դիրքորոշումներից: Վերոնշյալ դիրքորոշումը թեև արտահայտվել է հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորների գործունեության շրջանակներում, սակայն հարկ է նշել, որ այն կիրառելի է հակակոռուպցիոն իրավապահ մարմիններում իրականացվող ծառայության նկատմամբ ևս, քանի որ անդրադարձ է կատարվում հենց մասնագիտացման ռիսկերով պայմանավորված առկա տարբերություններին: Մասնավորապես, Վենետիկի հանձնաժողովը վերոնշյալ թիվ 896/2017 կարծիքով նշել է. «Թիվ 6011 օրենքի նախագծի համաձայն հակակոռուպցիոն դատավորների վարձատրության հատուկ համակարգը պետք է վերանայել: Մի կողմից, պարզ է, որ այդ դատավորները պետք է ունենան իրավունք ավելի բարձր աշխատավարձի, քան առաջին ատյանի դատարանների ընդհանուր մասնագիտացման դատավորները, և պետք է նաև հաշվի առնել, որ նրանք աշխատում են կարևոր կոռուպցիոն ռեպերի վրա և կարող են հայտնվել արտաքին զգալի ճնշման տակ, ԵԴԽՆ-ն ընդունում է հատուկ վարձատրության հնարավորությունը, «եթե հատուկ հիմքեր կարելի է առանձնացնել, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ կա՛մ մասնագետ դատավորի մասնագիտության առանձնահատկությունները, կա՛մ նրա պարտականությունների բեռը (ներառյալ անձնական բեռը, որը կարող է լինել՝ ծագած մասնագետի գործառույթի յուրահատկությամբ) պահանջում են այդպիսի վարձատրություն»<sup>[1]</sup>:

Հիշատակված իրավական դիրքորոշումներից պարզ է դառնում, որ սոցիալական արդարությունը, որպես Հայաստանի Հանրապետության հիմնարար նպատակ-արժեքներից մեկը, պահանջում է, ի թիվս այլ ռեպերի, պետական այս կամ այն ծառայության աշխատակիցների համար սահմանել աշխատանքային գործունեության համար արդար վարձատրություն՝ զուրկ խտրականության տարրերից: Խտրականության արգելքը, սակայն, ունի իր ողջամիտ սահմանները, այն



է՝ էական նշանակություն ունեցող աշխատանքային պայմանները, աշխատողին ներկայացվող յուրահատուկ պահանջները, այլ պայմաններ, որոնք աշխատողի համար էականորեն առավել տարբերվող պայմաններ են ստեղծում նույնաբնույթ այլ աշխատանք կատարող անձանցից, բացի այդ՝ անձից պահանջում են աշխատանքը կատարել առավել դժվարին, առավել բարձր ռիսկայինության պայմաններում: Այդ դեպքերում սոցիալական պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել համապատասխան աշխատակիցների առավել բարձր վարձատրություն, որպեսզի ապահովվի սոցիալական արդարությունը աշխատանքային հարաբերություններում:

Հակակոռուպցիոն կոմիտեի դեպքը քննարկելիս պարզ է դառնում, որ 1. Կոմիտեն իրականացնում է կոռուպցիոն հանցագործությունների քննություն, որն ինքնըստինքյան ունի բարձր ռիսկայնություն, քանի որ քննարկելու է հայտարարատու անձանց, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ենթադրաբար կատարված հանցավոր արարքներ, աշխատանքը պահանջում է էականորեն առավել բարձր մակարդակի պրոֆեսիոնալիզմ, հնարավոր ճնշման պայմաններում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գործելու կարողություն, ոլորտային օրենսդրության առավել մանրամասն իմացություն: 2. Կոմիտեի ծառայողների վարձատրությունը ուղղակիորեն հանդիսանում է վերջինիս անկախության և անկաշկանդ գործելու երաշխիքներից մեկը: Որպեսիրավապահ մարմին, որ մասնագիտացած է լինելու հենց կոռուպցիոն հանցագործությունների փաստի հիման վրա հարուցված քրեական գործերը քննելու լիզորությամբ, կարևորագույն նախապայման է, որպեսզի համապատասխան աշխատակիցները ապահովված լինեն բոլոր բարենպաստ նախապայմաններով, ի թիվս որոնց, առաջնային դիրք են զրավում անկախությունը և անկաշկանդ գործելու հնարավորությունը: 3. Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ աշխատելու համար առկա են մի շարք էական սահմանափակումներ, որակավորման առավել բարձր մակարդակ, այդ թվում՝ լեզուների իմացություն, բարեվարքության ստուգում, մրցութային կարգով աշխատանքի անցնելու պահանջ, բացի այդ՝ բարեվարքության պարբերաբար ստուգումներ Հակակոռուպցիոն կոմիտեում աշխատանքային գործունեություն ծավալելու ամբողջ ընթացքում:

Հիշյալ բոլոր պայմանները համակցության մեջ դիտարկելիս պարզ է դառնում, որ Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնելու և գործունեություն ծավալելու համար ներկայացվում են լրացուցիչ պահանջներ, աշխատանքային գործունեությունը ծավալվելու է ավելի լարված պայմաններում, իսկ վարքագծի անբասիրությունը ենթարկվելու է պարբերաբար ու խիստ ստուգման, ինչը հանգեցնում է

անհրաժեշտության, որպեսզի Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները ստանան առավել բարձր վարձատրություն:

Հարկ է նաև նշել, որ հաշվի առնելով Կոմիտեի գործունեության թափանցիկության և հանրային հաշվետվողականության սկզբունքները, ինչպես նաև միջազգային կառույցների կողմից հակակոռուպցիոն իրավապահ մարմնի վերաբերյալ ներկայացված կարծիքները, Կոմիտեի աշխատակիցների վարձատրության հարաբերությունները, ի տարբերություն այլ իրավապահ մարմինների, ամբողջապես կարգավորվում են օրենքով:

Կոմիտեի գործունեությունը պետք է լինի հնարավորինս թափանցիկ և հիմնված լինի հաշվետվողականության վրա: Այդ նպատակով Նախագծով առաջակվող կարգավորումների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, իր պաշտոնական կայքէջում հրապարակում է գործունեության մասին ամփոփ տեղեկատվություն: Տեղեկատվության կառուցվածքը, դրանում ներառվող հարցերի շրջանակը սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունը պաշտոնական կայքէջում հրապարակվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը:

Նախագծով կարգավորվել է նաև քննչական ենթակայության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումները: Նշվածը պայմանավորված է օրենսդրական որոշակի բացերի վերացման անհրաժեշտությամբ:

Ինչ վերաբերում է հաստիքների սահմանմանը և գործերի բաշխմանը՝ հարկ է նշել, որ, 2019 թվականի հոկտեմբերի 3-ին հաստատված Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանվել էր, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանալու կրճատել այլ մարմինների հաստիքները և դրանք փոխանցել Հակակոռուպցիոն կոմիտեին: Այս առումով, ռազմավարությամբ նախատեսվում էր կրճատել ՀՀ ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման համար նախատեսված հաստիքները, Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքները, ինչպես նաև Ազգային անվտանգության ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման համար նախատեսված և կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Կոմիտեի ստեղծմամբ լուծարվում է Հատուկ քննչական ծառայությունը, որի կողմից քննվող կոռուպցիոն գործերը փոխանցվելու են Կոմիտեին: Մյուս իրավապահ մարմինների կողմից արդեն իսկ հարուցված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը կարող են փոխանցվել Կոմիտեի նախագահի համաձայնության պարագայում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանը հաջորդող որոշ ժամանակահատվածի ընթացքում վերոնշյալ մարմինները շարունակվելու են քննել իրենց վարույթներում առկա գործերը, որպեսզի հնարավոր լինի անցումային շրջանում սահուն կերպով ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից գործերի քննության արդյունավետությունը՝ հաստիքների կրճատումը և գործերի փոխանցումը հակակոռուպցիոն կոմիտեի վարույթ պետք է իրականացվի հատվածային մոտեցմամբ:

Այս առումով, իրավապահ մարմինների կողմից կոռուպցիոն հանցագործությունների քննության իրական պատկեր ստանալու նպատակով՝ Արդարադատության նախարարությունը ևս մեկ անգամ հարցում է կատարել քննչական մարմիններին և Գլխավոր դատախազությանը: Գլխավոր դատախազությունից ստացված պատասխանի համաձայն՝ 2019 թվականի հուլիսի մեկից մինչև 2020 թվականի հուլիսի մեկն ընկած ժամանակահատվածում հսկողություն է իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ 2228 քրեական գործի մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ:

Հատուկ քննչական ծառայությունից ստացված պատասխանի համաձայն՝ հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածում քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 362 քրեական գործ: Նախաքննությունն հիմնականում իրականացրել են կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների քննության վարչության 10 քննիչները, սակայն անհրաժեշտության դեպքում նախաքննությունն իրականացրել են նաև այլ վարչությունների և ծառայության պետին առընթեր քննիչները: Ազգային անվտանգության ծառայությունից ստացված պատասխանի համաձայն՝ 2019 թվականի հուլիսի մեկից մինչև 2020 թվականի հուլիսի մեկն ընկած ժամանակահատվածում քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 184 քրեական գործ: Նախաքննությունն իրականացվել է 17 քննիչների կողմից: Պետական եկամուտների կոմիտեի նշմամբ նույն ժամանակահատվածում քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով

նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 28 քրեական գործ: Նախաքննությունն իրականացվել է 13 քննիչների կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քննչական կոմիտեում վիճակագրությունը վարվում էր մինչ այս պահը բացառապես նախկին կոռուպցիոն հանցագործությունների ցանկի համաձայն, որն անհամեմատ առավել լայն է, քան գործող ցանկը, նշվել է, որ սահմանված ժամանակահատվածում քննվել է 1313 քրեական գործ, որից 555-ը փոխանցվել է 2019թ.-ի առաջին կիսմյակից, իսկ 825-ը փոխանցվել են 2020 թվականի երկրորդ կիսամյակ: Քննչական կոմիտեն նշել է, որ քննիչների քանակի վերաբերյալ ստույգ տեղեկատվություն չի կարող տրամադրել, քանի որ նախաքննությունն իրականացրել են տարբեր վարչությունների քննիչներ:

Վերոգրյալի միտումով՝ նախնական հաշվարկներով Կոմիտեում ներգրավված են լինելու մոտ 30 քննիչներ և 60 օպերատիվ աշխատակիցներ: Հարկ է նշել, որ նշված է պահանջվող աշխատակիցների նախնական քանակը, որը, հաշվի առնելով կոռուպցիոն հանցագործություններով հարուցվող քրեական գործերի աճը, հետագայում կարող է վերանայվել: Կոմիտեի առաջին կազմի համապատասխան քանակով քննիչների նշանակումից հետո, 10-օրյա ժամկետում՝ Հատուկ քննչական ծառայությունում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով հարուցված քրեական գործերը (նյութերը), ինչպես նաև կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործի հարուցման փուլում գտնվող գործերը փոխանցվում են Հակակոռուպցիոն կոմիտեին: Բացի այդ, մինչև Կոմիտեի ստեղծումը ընկած ժամանակահատվածում այլ քննչական մարմիններում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերը (նյութերը) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է այդ մարմինների քննիչների վարույթից վերցնել և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համաձայնությամբ հանձնել Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթին:

***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.***

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

***Ակնկալվող արդյունքը.***

Սույն Նախագծի ընդունմամբ ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն իրավախախտումների բացահայտումը, կոռուպցիոն հանցագործությունների քննությունը դարձնել ավելի արդյունավետ՝ այն մասնագիտացված, անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն մարմնի միջոցով իրականացնելու եղանակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ո

«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԵՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 14. Լիազոր մարմնի լիազորություններն ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում

1. Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում Լիազոր մարմինը՝

1) մշակում է պետական ռազմավարությունը և համակարգում դրանից բխող միջոցառումների իրականացումը.

2) իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով՝ ընդգրկելով ինչպես ոստիկանության, քննչական կոմիտեի, ~~հատուկ քննչական ծառայության,~~ դատախազության և Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի, այնպես էլ վերջիններիս չգրանցած աջակցության կենտրոնների, խնամակալության և հոգաբարձության մարմինների, առողջապահության և կրթության բնագավառներում լիազոր հանրապետական գործադիր մարմինների տրամադրած տվյալները, և դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրության վարում, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում.

3) ուսումնասիրում է ընտանիքում բռնության պատճառները, պայմանները և հետևանքները, մշակում դրանց հաղթահարմանն ուղղված ծրագրեր.

4) վերահսկում է ապաստարանների կողմից Կառավարության սահմանած՝ ապաստարանին և դրա անձնակազմին ներկայացվող պահանջների պահպանումը, ինչպես նաև իրականացնում է ոչ առևտրային իրավաբանական անձանց կողմից ընտանիքում բռնության ենթարկվածներին ապաստարանի միջոցով սոցիալական

Ժառայություններ տրամադրվելու հավաստագրում Կառավարության սահմանած կարգով.

5) հիմնադրում է ապաստարաններ, ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կնքում ապաստարանի ֆինանսավորման պայմանագիր կառավարության սահմանած պայմանագրի օրինակելի ձևի հիման վրա և վերահսկողություն իրականացնում իր կողմից մասնակի կամ ամբողջապես ֆինանսավորվող ապաստարանների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ ֆինանսական միջոցների օգտագործման մասով.

6) պարբերաբար կազմակերպում է աջակցության կենտրոնների և ապաստարանների աշխատակիցների վերապատրաստում, այդ թվում՝ ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ.

7) հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատողի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում՝ նաև նրանց համար մատչելի օգնություն.

8) ընտանիքում բռնության ենթարկվածներին ժամանակավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով բացում է ընտանիքում բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամար և տնօրինում այն՝ կառավարության սահմանած [կարգով](#): Հաշվեհամարի միջոցները ձևավորվում են պետական բյուջեի հատկացումներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցներից.

9) հաստատում է աջակցության կենտրոնի կողմից ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցման կազմակերպման և իրականացման կարգը.

10) սահմանում է կանխարգելիչ հաշվառման շրջանակում չափահաս անձանց կողմից ընտանիքում բռնություն գործադրելը կանխարգելելու նպատակով մշտադիտարկման իրականացման կարգը.

11) հաստատում է ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիոն ծրագիրը:

2. Լիազոր մարմնի ղեկավարին կից գործում է [Ընտանիքում բռնության կանխարգելման Խորհուրդը](#), որը նրան առաջարկություններ է ներկայացնում ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում պետական ռազմավարության, դրանից բխող ծրագրերի, օրենսդրական բարեփոխումների, հանրության իրազեկման միջոցառումների և այլ հարցերի վերաբերյալ: Խորհրդի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական հիմունքներով: Խորհրդի կազմում հավասար թվով ընդգրկվում են՝

1) հանրապետական գործադիր իշխանության, ոստիկանության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, դատախազության ներկայացուցիչներ.

2) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ.

3) աջակցության կենտրոնների և ապաստարանների աշխատակիցներ՝ Լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ:

3. Խորհրդի կազմում ընդգրկվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մեկ ներկայացուցիչ:

4. Խորհրդի գործառույթները, ձևավորման կարգը սահմանում է Կառավարությունը, իսկ անհատական կազմը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը:

[Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրը:](#)

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԱՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ  
[Կ-795-04.12.2020-ՊԻ-011/1](#) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
 ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխո ւթյուն, լրացում)	Առաջարկությ ան վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությո ւնը	Առաջարկությ ուններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողո վի որոշումը
1.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 3, մաս 1,	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը սահմանող	Ընդունվել է	Ընդունվել է



		կետ 5	հավելվածին հղումը սխալ է կատարված (ոչ թե 1-ին, այլ 6-րդ հավելված): Առաջարկում ենք ուղղել:		
2.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 7, մաս 3,	Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային հաշվետվության մեջ (հրապարակվում է ինտերնետային կայքէջով) ներառվող հարցերի շրջանակը սահմանում է կոմիտեի նախագահը: Նման կարգավորումը չի բխում կոմիտեի՝ քաղաքացիական վերահսկողության տակ գտնվելու գաղափարից: Առաջարկվում է հաշվետվությունում ներառվող հարցերի շրջանակը սահմանել օրենքով:	Չի ընդունվել	Չի ընդունվել
3.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 11, մաս 4,	Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ <i>Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին սույն օրենքով սահմանված կարգով նշանակում է վարչապետը՝ վեց տարի ժամկետով և սույն օրենքով սահմանված</i>	Ընդունվել է մասնակի	Ընդունվել է մասնակի

			<p><i>կարգով:</i></p> <p>Այսինքն, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նշանակվելու է Վարչապետի անհատական ակտով, ինչը հակասում է օրենսդրության ընդհանուր տրամաբանությանը, քանի որ Վարչապետին իրավունք է վերապահում իր հրամանով նշանակել այնպիսի մարմնի ղեկավարի, որը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վարչապետին կամ նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Կառավարությանը ենթակա մարմին չէ:</p> <p>Նման ձևակերպումից ենթադրվում է, որ մրցույթով առաջադրված պայմաններին կարող են համապատասխանել մի քանի թեկնածու, որոնք էլ ճանաչվում են որպես մրցույթի հաղթողներ, իսկ Վարչապետը նրանցից մեկին նշանակում է</p>		
--	--	--	--	--	--

			<p>Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ: Ընդ որում, Նախագիծը չի սահմանում, թե նման պարագայում Վարչապետն ինչ չափանիշներով է առաջնորդվելու՝ կոմիտեի նախագահին պաշտոնում նշանակելիս:</p> <p>Ընդգծենք նաև, որ այս կարգը նույնական չէ քննչական կոմիտեի նախագահի նշանակման կարգին, որի դեպքում նշանակումը կատարում է Կառավարությունը՝ Վարչապետի ներկայացմամբ («Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մաս): Նշենք, նաև, որ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2014թ. մայիսին՝ մինչ 2015թ. սահմանադրական փոփոխությունների ընդունումը: Ավելին, մեր համոզմամբ՝ Հակակոռուպցիոն</p>		
--	--	--	--	--	--

			<p>կոմիտեն պետք է համարվի ինքնավար մարմին և, ըստ այդմ, համաձայն Սահմանադրության 122-րդ հոդվածի՝</p> <p><b>ա)</b> որպես Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով ստեղծվող ինքնավար մարմնի մասին օրենքի նախագիծ՝ Նախագիծը պետք է ստանա պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը.</p> <p><b>բ)</b> Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը և տեղակալները՝ որպես ինքնավար մարմնի անդամներ, պետք է նշանակվեն պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, այսինքն՝ ընտրվեն Ազգային ժողովի կողմից՝ ձայների նշված որակյալ մեծամասնությամբ (այս դեպքում արդեն կոմիտեն կունենա ոչ թե նախագահ և տեղակալներ, այլ կոմիտեի անդամներ, այդ թվում՝ նախագահ):</p>		
--	--	--	--	--	--

			Այսպիսով՝ առաջարկում ենք Նախագիծն այս մասով համապատասխանեցնել Սահմանադրության 122-րդ հոդվածի պահանջներին:		
4.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 7	Միաժամանակ, առաջարկում ենք, որպեսզի Գլխավոր դատախազի նմանությամբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը ևս Ազգային ժողով ներկայացնի տարեկան հաղորդում, որը կքննարկվի դատախազի հաղորդման քննարկման կարգով: Այսինքն՝ առաջարկում ենք նախատեսել. «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հակակոռուպցիոն կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին: Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է Կանոնակարգի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի	Չի ընդունվել	Չի ընդունվել

			ներկայացնամք:»:		
5.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 11, 2-րդ մաս, 11-րդ կետ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ Հոդված 2	Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով` <i>Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին իրավունք է վերապահված ներքին անվտանգության ստորաբաժանման միջոցով պարբերաբար իրականացնել կոմիտեի ծառայողների առաքիճության ստուգում, այդ թվում` պրովոկացիոն եղանակով:</i> Իսկ Նախագծի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն` <i>Կարգապահական տույժի ենթարկված հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված քաղաքացիական, վարչական կամ քրեական պատասխանատվությունից` բացառությամբ այն դեպքերի, երբ կարգապահական տույժը կիրառվել է առաքիճության ստուգման շրջանակներում</i>	Չի ընդունվել	Չի ընդունվել

			<p><i>կատարված խախտման հիմքով:</i></p> <p>Նախագծով նախատեսված չեն  Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի  նշված լիազորության իրականացման կարգը և  դեպքերը, մինդեռ հարցը չափազանց նուրբ է  և կարիք ունի օրենսդրական մակարդակով  կարգավորման:</p> <p>Նշյալ հոդվածների հետ փոխկապակցված՝  «Հայաստանի Հանրապետության քրեական  օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»  Հայաստանի Հանրապետության օրենքի  նախագծի (Կ-795<sup>4</sup>) 2-րդ հոդվածում  ընդհանրապես անընդունելի և  բացարձակապես չհիմնավորված  կարգավորում է Հայաստանի  Հանրապետության քրեական  օրենսգրքի (այսուհետ՝ «Քրեական  օրենսգիրք») 350-րդ հոդվածի՝ այս մասով  ապաքրեականացումը: Առաջարկում ենք այդ  հոդվածը հանել առաջարկվող դրույթների</p>		
--	--	--	--	--	--

			շարքից:		
6.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 15, մաս 3,	Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկվում են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող հանգամանքները, ի թիվս որոնց թվարկված են նաև որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր և փաստաբան լինելու վերջին 5 տարվա ընթացքում որոշակի տեսակի կարգապահական տույժերի ենթարկված լինելու հանգամանքը (6-9-րդ կետեր): Նախ, համապատասխան օրենսդրությամբ բավարար չափի հստակությամբ կարգավորված չեն կարգապահական վարույթի կապակցությամբ առաջացող հարաբերությունները, մասնավորապես՝ կոնկրետ ո՞ր խումբ արարքների դեպքում են կիրառվում Նախագծով թվարկված կարգապահական տույժերը, նախատեսված չեն կարգապահական վարույթի լրիվության,	Ընդունվել է մասնակի	Ընդունվել է մասնակի



			<p>օրյեկտիվության և բազմակողմանիության բավարար երաշխիքներ:</p> <p>Կարգավորումը խնդրահարույց է նաև Նախագծի նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի տեսանկյունից, համաձայն որի՝ անզգուշությամբ կատարված հանցագործության համար դատապարտված անձը, որի դատվածությունը հանվել կամ մարվել է, կարող է նշանակվել</p> <p>Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող:</p> <p>Քրեական օրենսգրքի 19-րդ և 84-րդ հոդվածների՝ անզգուշությամբ կատարված հանցագործության դեպքում դատվածությունը մարվում է պատիժը կրելուց 3 տարի անց:</p> <p>Այսինքն՝ կարգապահական պատասխանատվության համար վրա հասնող հետևանքերը Նախագծի տեսանկյունից ավելի խիստ են, քան քրեական պատասխանատվության ենթարկված լինելու դեպքում:</p>		
--	--	--	---	--	--

			<p>Այս մասով առաջարկում ենք խմբագրել և նախատեսել, որ եթե համապատասխան օրենսդրությամբ նախատեսվող տույժը համարվում է հանված/մարված, ապա անձը կարող է դիմել Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայության անցնելու համար:</p> <p>Ի տարբերություն «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի, որով Քննչական կոմիտեում ծառայության անցնելու համար խոչընդոտ է համարվում ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցված լինելու հանգամանքը, Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայության անցնելու խոչընդոտ է միայն դիտավորյալ հանցագործությամբ քրեական հետապնդման ոչ արդարացնող հիմքերով դադարեցումը: Այսինքն՝</p>		
--	--	--	--	--	--

			<p>ենթադրաբար ավելի բարդ, մասնագիտացում պահանջող և ռիսկային գործերի քննությամբ զբաղվող մարմնում ծառայության անցնելու չափանիշներն ավելի մեղմ են: Առկա է օբյեկտիվ հիմնավորում չունեցող խտրականություն, որն առաջարկում ենք բացառել:</p>		
7.	<p>«Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 16, մաս 7,</p>	<p>Նախագծի 16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝  <i>Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնները համալրվում են սույն օրենքով սահմանված կարգով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա:</i>  Իսկ նույն հոդվածի 8-րդ մասով՝  <i>Հակակոռուպցիոն կոմիտեի այն պաշտոններում, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործությունների լիակատար</i></p>	Չի ընդունվել	Չի ընդունվել

		<p><i>պահպանմամբ, պաշտոնի նշանակելու (ատեստավորման, վերապատրաստման, այլ պաշտոնի փոխադրելու) կարգը և պայմանները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:</i></p> <p>Նախագծով նման խումբ պաշտոնների նշանակման կարգին վերաբերող ընդհանուր նորմները բացակայում են, ինչը խնդրահարույց է իրավական որոշակիության տեսանկյունից: Բացի դրանից, ենթադրվում է, որ այդ խումբ աշխատակիցներին է վստահվելու այլ անձանց իրավունքները սահմանափակող գաղտնի գործողությունների կատարումը, հետևաբար՝ նրանց՝ պաշտոններում նշանակման կարգը պետք է բավարար աստիճանի որոշակի լինի:</p> <p>Առաջարկվում է նշված խումբ պաշտոններում նշանակվելու կարգը և սահմանել նույն օրենքով:</p>		
--	--	--	--	--

8.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 17, մաս 1, 2	<p>Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝</p> <p><i>Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների (բացառությամբ՝ կոմիտեի նախագահի) ցուցակը համալրում է մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ «Հանձնաժողով»), որի կազմի մեջ մտնում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից նշանակված կոմիտեի 3 ծառայող, Կառավարության կողմից առաջադրված 1 անձ և քաղաքացիական հասարակության 1 ներկայացուցիչ:</i></p> <p>Առաջարկվում է նշյալ հոդվածով Հանձնաժողովի ձևավորմանը ներգրավել այլ մարմինների ներկայացուցիչներին ևս (Ազգային ժողովի խմբակցություններ, Բարձրագույն դատական խորհուրդ, Գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների պաշտպան): Նման դրույթի սահմանման անհրաժեշտությունը բխում է նաև Նախագծի</p>	Չի ընդունվել	Չի ընդունվել
----	-----------------------------------	--	--	--------------	--------------

			35-րդ հոդվածի 14-րդ մասի կարգավորումներից, որի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ժառայողների ատեստավորումն իրականացնելու է Հանձնաժողովը:		
9.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 17, մաս 11	Նախագծի 17-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ <i>Մասնակիցը մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո նույն օրը կարող է դրանք գրավոր բողոքարկել</i> <i>Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:</i> Առաջարկվում է նախատեսել բողոքարկման իրավունքի իրացման ավելի երկար և ողջամիտ ժամկետ:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 17, մաս 1, 2	Նախագծի 17-րդ հոդվածի 13-15-րդ մասերի համաձայն՝ <i>Ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք</i> <i>«Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով</i>	Ընդունվել է	Ընդունվել է

			<p>սահմանված կարգով մասնագիտական պատրաստում են անցնում արդարադատության ակադեմիայում: Անձը հանվում է ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակից, եթե Արդարադատության ակադեմիայում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքում ստացած քննական միավորը պակաս է կուրսը հանձնված համարելու համար արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի սահմանած նվազագույն միավորից, կամ նա չի անցել «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փորձաշրջանը կամ արդարադատության ակադեմիայում ուսումնառության ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 20 տոկոսից:</p>		
--	--	--	---	--	--

			<p><i>Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք ցուցակում ընդգրկվելուց հետո ոստիկանության ուսումնական հաստատությունում անցնում են վերապատրաստման դասընթաց: Վերապատրաստման դասընթացի անցկացման կարգը, տևողությունը, ինչպես նաև վերապատրաստման ուսումնական ծրագիրը հաստատվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և Ոստիկանության պետի համատեղ հրամանով: Անձն ազատվում է սույն հոդվածի 13-րդ և 14- րդ մասերով սահմանված ուսումնառությունից, եթե ունի դատախազի, դատավորի, քննիչի, հետաքննության մարմնի պետի կամ աշխատակցի պաշտոնում կամ փաստաբանի 2 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի:</i></p>		
--	--	--	---	--	--



			<p>Առաջարկվող կարգավորումը խնդրահարույց է Նախագծի 16-րդ հոդվածի 1-5-րդ մասերի լույսի ներքո, որոնց համաձայն, օրինակ, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնին նշանակվելու իրավունք է վերապահվել նաև հետաքննիչի և օպերլիազորի պաշտոններում առնվազն 5 տարվա (նախագահի տեղակալի դեպքում՝ 4 տարվա) ընդհանուր ստաժ ունեցող անձին: Փաստացի, 5 տարվա ստաժ ունեցող հետաքննիչը կամ օպերլիազորը, հանդիսանալով հետաքննության մարմնի աշխատակիցներ, համապատասխանում են Նախագծի 17-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված պայմանին և ազատվում են ուսումնառություն անցնելու պարտականությունից՝ միևնույն ժամանակ ունենալով ընդհուպ մինչև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնին հավակնելու իրավունք: Նախագծի հիմնավորմամբ</p>		
--	--	--	--	--	--

			<p>Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորումը պայմանավորվում է կոռուպցիոն գործերի քննության բարդությամբ, ինչը պահանջում է համապատասխան մասնագիտացում: Նման պայմաններում կարող է նպատակահարմար համարվել միայն գործող դատախազների և քննիչիների համար միայն փորձաշրջանից ազատվելու իրավունքի վերապահումը: Վերը նշված նկատառումներից ելնելով՝ առաջարկվում է նաև վերանայել նախագծի 16-րդ հոդվածի 1-6-րդ մասերով Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոններում նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտական աշխատանքային ստաժի չափերը, ինչպես նաև նախատեսել համապատասխան ստաժ կոմիտեի առաջատար պաշտոնների 3-րդ ենթախմբի համար նույնպես:</p>		
11.	«Լուսավոր Հայաստան»	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին»	Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝	Չի ընդունվել	Չի ընդունվել

	<p>խմբակցություն</p>	<p>օրենքի նախագիծ, հողված 18, մաս 1, 2</p>	<p><i>Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորվում է մրցութային խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ):</i></p> <p><i>Խորհուրդը ձևավորվում է Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշանակած մեկական թեկնածուներից և քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցից:</i></p> <p>Այսինքն, ստացվում է, որ իշխող մեծամասնությունը խորհրդում ունենալու է ներկայացուցիչ ինչպես Կառավարության, այնպես էլ Ազգային ժողովի խորհրդի կողմից՝ հաշվի առնելով խորհրդարանական ուժերի թվային հարաբերակցությունը, ինչը բնականաբար չի կարող ընդունելի տարբերակ համարվել, քանի որ բացառում է ընդդիմության մասնակցությունը՝ որպես</p>		
--	----------------------	--	---	--	--

			<p>փոխզսպող և հակակշռող ուժ:</p> <p>Շատ այդմ՝ առաջարկվում է Խորհրդում Խորհրդարանական յուրաքանչյուր խմբակցությունից ներառել մեկական ներկայացուցիչ:</p>		
12.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 18, մաս 9	<p>18-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ <i>Խորհրդի աշխատանքները կազմակերպում է Վարչապետի աշխատակազմը:</i></p> <p>Սա բացարձակապես անընդունելի կարգավորում է՝ հաշվի առնելով այն, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ստեղծվում է որպես քննչական մարմին՝ ըստ Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի, իսկ 5-րդ հոդված 1-ին մասով՝ դրա գործունեությունը հիմնվում է անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների վրա: Այսինքն՝ Նախագիծը պարունակում է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ Վարչապետից անուղղակի կախվածություն ենթադրող</p>	Չի ընդունվել	Չի ընդունվել

			կարգավորում՝ այն դեպքում, երբ կոմիտեի առջև դրված խնդիրների պատշաճ կատարումը պահանջում է լիակատար անկախություն: Ըստ այդմ՝ առաջարկում ենք համապատասխան աշխատանքների կազմակերպումը վերապահել այլ՝ քաղաքականապես չեզոք մարմնի, իսկ հետագայում ձևավորել Խորհրդի աշխատակազմ և լուծել մյուս վերաբերելի խնդիրները:		
13.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 18, մաս 12 կետ 8	Նախագծի կարգավորումներից պարզ չէ, թե արդյո՞ք Վարչապետն իրավասու է պաշտոնի չնշանակել Խորհրդի կողմից ընտրված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուին: Նախագծի 18-րդ հոդվածի 12-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ <i>Խորհուրդը կազմում և վարչապետին է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը (...):</i>	Ընդունվել է	Ընդունվել է
14.	«Լուսավոր	«Հակակոռուպցիոն	Նախագծի 19-րդ հոդվածի 6-րդ մասի 3-	Ընդունվել է	Ընդունվել է

	<p>«Հայաստան» խմբակցություն</p>	<p>Կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 19, մաս 6 կետ 3</p>	<p>րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ <i>Խորհուրդը մրցույթն անցկացնում է հետևյալ փուլերով՝ (...) հարցազրույցի փուլ՝ Խորհուրդը բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում անցկացնում է հարցազրույց՝ հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունն Աշխատակազմի միջոցով հարցազրույցն անցկացնելուց առնվազն երեք օր առաջ հրապարակելով աշխատակազմի պաշտոնական կայքէջում: Հարցազրույցն իրականացվում է հետևյալ փուլերով՝ (...) Համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի նորմի, դատական ակտում արտահայտված դիրքորոշումներ և այլն) թեկնածուի կողմից իրականացվող</i></p>		
--	-------------------------------------	--	---	--	--

			<p>վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հնտությունները, վերլուծական կարողությունները և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար: Թեկնածուին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքները ստուգելու նպատակ (...):</p> <p>Այսինքն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցույթի ընթացքում չի անցնակցվում թեստավորման փուլ, իսկ այն, որ թեկնածուին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքներն ստուգելու նպատակ, բացարձակապես չունի օբյեկտիվ հիմնավորում:</p>		
15.	«Լուսավոր	«Հակակոռուպցիոն	Նախագծի 27-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

	<p>«Հայաստան» խմբակցություն</p>	<p>Կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 27, մաս 7 կետ 3</p>	<p>Կետի համաձայն՝ <i>Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հերթական դասային աստիճանի շնորհումը հետաձգվում է, եթե նրա նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում կամ կատարվում է ծառայողական քննություն:</i> Նման կարգավորումը խախտում է անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, քանի որ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի բացակայության պայմաններում անձի համար զուտ քրեական հետապնդում հարուցված լինելու փաստով նախատեսում է իրավունք սահմանափակող դրույթ: Ընդ որում, Նախագիծը չի սահմանում, թե քրեական հետապնդման դադարեցման, այդ թվում՝ արդարացնող հիմքերով, դեպքում երբվանից է դասային աստիճանը համարվում տրված: Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության</p>		
--	-------------------------------------	--	--	--	--



			<p>օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի օրինակով, որպես հերթական դասային աստիճանի շնորհման հետաձգման հիմք, սահմանել նաև քննիչի լիազորությունների կասեցումը:</p>		
16.	<p>«Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 33, մաս 3</p>	<p>Նախագծի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝  <i>Հակակոռուպցիոն կոմիտեի բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների նկատմամբ չի կիրառվում «դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժը:</i>          Այդ կարգավորման օբյեկտիվ հիմնավորումը որևէ կերպ ներկայացված չէ: Առաջարկում ենք այստեղ ևս բացառել խտրական մոտեցումը Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների միջև:</p>	Չի ընդունվել	Չի ընդունվել
17.	<p>«Լուսավոր Հայաստան» խմբակցություն</p>	<p>«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 35,</p>	<p>Նախագծի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը կարող է ենթարկվել արտահերթ ատեստավորման կոմիտեի նախագահի</p>	Չի ընդունվել	Չի ընդունվել

		մաս 4	որոշմամբ, սակայն չի նշում, թե որ դեպքերում կոմիտեի նախագահը կարող է արտահերթ ատեստավորման մասին որոշում կայացնել: Չարաշահումն ներից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք նախատեսել համապատասխան հիմքերը:		
18.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 35, մաս 6	Առաջարկում ենք Նախագծի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում «և» շաղկապը փոխարինել «կամ» շաղկապով:	Ընդունվել է	Ընդունվել է
19.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 36, մաս 1	Նախագծի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ <i>Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները, քաղաքացիները, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների, պարտավոր են ոչ պակաս, քան երեք տարին մեկ անգամ անցնել վերապատրաստում:</i> «Հայաստանի Հանրապետության քննչական	Ընդունվել է	Ընդունվել է

			<p>կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, բացառությամբ քննչական կոմիտեի նախագահի և նրա տեղակալների, պարտավոր են ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ անցնել վերապատրաստում: Անհասկանալի է նման տարբերության իրավական հիմքը:</p>		
20.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 39, մաս 4,	<p>Նախագծի 39-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լիազորությունների կասեցման հիմքերից միայն մեկի դեպքում է նա պահպանում աշխատավարձը, իսկ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անկախ կասեցման</p>	Ընդունվել է մասնակի	Ընդունվել է մասնակի

			<p>հիմքից՝ քննիչը պահպանում է իր աշխատավարձը իր լիազորությունների կասեցման ամբողջ ժամանակահատվածում:</p> <p>Նախագծով բացասական խտրականություն է դրսևորվել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների նկատմամբ:</p> <p>Նախագիծը չի սահմանում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա պաշտոնին այլ անձի ժամանակավոր նշանակման կարգը: Առաջարկվում է այդ հարցը լուծել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի օրինակով:</p>		
21.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 41, մաս 2,	Նախագծի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարող է տրվել միանվագ դրամական օգնություն կոմիտեի նախագահի սահմանած դեպքերում, կարգով և չափով:	Ընդունվել է	Ընդունվել է

			<p>Առաջարկվում է կա՛մ Նախագծով հստակ սահմանել միանվագ օգնության վճարման դեպքերը և չափը, կա՛մ կոմիտեի ծառայողների նկատմամբ տարածել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթները:</p>		
22.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 45	<p>Առաջարկվում է Նախագծի 45-րդ հոդվածը «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի օրինակով լրացնել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի անձնական պաշտպանության հատուկ միջոցների ցանկը, ինչպես նաև դրանք սպառազինության մեջ ընդգրկելու, սպառազինությունից հանելու և ոչնչացնելու կարգը, ինչպես նաև ծառայողական հաշվեցուցակային զենքի և</p>	Չի ընդունվել	Չի ընդունվել

			անձնական պաշտպանության հատուկ միջոցների գործադրման հիմքերը և կարգը:		
23.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 8	Նախագծով կարգավորված չեն Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորման հարցերը: Առաջարկում ենք լրացնել այդ բացը:	Չի ընդունվել	Չի ընդունվել
24.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 46 «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության	Նախագծի 46-րդ հոդվածի համաձայն՝ <i>Հայաստանի Հանրապետության ոստիկանության, պետական եկամուտների կոմիտեի և ազգային անվտանգության ծառայության ծառայողներին, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատախազության և պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչներին և հետաքննիչներին հակակոռուպցիոն կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում նշանակելիս Հայաստանի Հանրապետության</i>	Չի ընդունվել	Չի ընդունվել

		<p>օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենք հոդված 1, մաս 1</p>	<p><i>նուստիկանությունում, քննչական կոմիտեում, պետական եկամուտների կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում, ազգային անվտանգության ծառայությունում, դատախազությունում, պաշտպանության նախարարությունում նրանց ունեցած ստաժը հաշվարկվում է հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնելու ստաժի մեջ:</i></p> <p>Նախագծի հիմնավորմամբ այս հարցին անդրադարձ կատարված չէ և հասկանալի չէ, թե նման կարգավորումն ինչ նպատակ է հետապնդում և որն է դրա անհրաժեշտությունը:</p> <p>Իսկ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (795<sup>8</sup>) 1-ին հոդվածի 1-ին կետով՝ <i>«Պաշտոնատար անձանց գործունեության</i></p>		
--	--	---	---	--	--

			<p>ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի հակակոռուպցիոն կոմիտեում առնվազն 10 տարի «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի իմաստով հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցրած անձը (...):</p> <p>Սա բացարձակապես անընդունելի և խիստ խտրական վերաբերմունք է այլ համադրելի հանրային ծառայությունների, զինվորական ծառայության համեմատ:</p> <p>Առաջարկում ենք արմատապես վերանայել առաջարկվող կարգավորումը:</p>		
25.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ, հոդված 48, մաս 10	Նախագծի 48-րդ հոդվածի 10-րդ մասը հնարավոր է համարում Հակակոռուպցիոն կոմիտեի կազմում նշանակվելն առանց Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջին համապատասխանելու (օտար լեզվի B1 մակարդակի իմացություն):	Չի ընդունվել	Չի ընդունվել



			Առաջարկվում է հստակ սահմանել, թե որն է համարվում Հակակոռուպցիոն կոմիտեի առաջին կազմ (օրինակ, Նախագծի 48-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված քանակով ծառայողները):		
26.	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 7, մաս 1	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (4-795 <sup>1</sup> ) 7-րդ հոդվածի 1-ին մասով կատարվող լրացմամբ՝ ստացվում է, որ՝ <i>Այն դեպքերում, եթե սույն հոդվածով օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ</i>	Ընդունվել է	Ընդունվել է

		<p>գործողությունների, ապա Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումը սույն հոդվածով նախատեսված կարգով ապահովում է այդ միջոցառումների իրականացումը, սակայն այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միջնորդությամբ Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանումը դիմած մարմինը պարտավոր է 48 ժամվա ընթացքում Օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանում ներկայացնել դրանց իրականացումը թույլատրելու կամ չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը:</p> <p>(...) 48 ժամվա ընթացքում դատարանի թույլտվությունը չներկայացնելու կամ սույն հոդվածով նախատեսված օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը Օպերատիվ-տեխնիկական</p>		
--	--	---	--	--

			<p>ստորաբաժանում ներկայացնելու դեպքում դրանց անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ արդեն ձեռք բերված տեղեկությունները և նյութերը միջոցառումն իրականացնող մարմնի կողմից ենթակա են անհապաղ ոչնչացման: Սույն մասով նախատեսված յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը անհապաղ զեկուցում են անհապաղ զեկուցում է Հայաստանի Հանրապետության վարչապետին:</p> <p>Անհասկանալի է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից վարչապետին ինչ-որ բան զեկուցելու պահանջի սահմանումն այն դեպքում, երբ այդ կոմիտեն վարչապետին ենթակա մարմին չէ, ի տարբերություն</p>		
--	--	--	---	--	--

			<p>Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության:</p> <p>Բացի դրանից, Հակակոռուպցիոն կոմիտեն քննում է միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով թվարկված կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, որոնց դեպքում ըստ էության գործ չունենք այնպիսի իրադրությունների հետ, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների: Հետևաբար, առաջարկում ենք նախագծերի փաթեթից հանել տվյալ դրույթը:</p>		
27.	«Լուսավոր Հայաստան»	«Օպերատիվ-հետախուզական	Նույն նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող կարգավորմամբ՝	Չի ընդունվել	Չի ընդունվել

	<p>խմբակցություն</p>	<p>գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 7, մաս 2</p>	<p>Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման իրավասություն ունեցող յուրաքանչյուր մարմնի կտրվածքով հաջորդ տարվա հունվարի 31-ից ոչ ուշ Հայաստանի Հանրապետության վարչապետին տարեկան հաշվետվություն է ներկայացնում, որը պարունակում է նախորդ տարվա ընթացքում՝</p> <p>1) սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ Գլխավոր վարչություն ներկայացրած միջնորդությունների ընդհանուր թվաքանակը.</p> <p>2) այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, և հետագայում քաղվածքը չի ներկայացվել.</p>		
--	----------------------	--	--	--	--

			<p>3) <i>այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, իսկ դատարանը հետագայում իր որոշմամբ չի թույլատրել նման օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը:</i></p> <p>Փաստացի, նախատեսվում է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ Վարչապետին ենթակայություն ենթադրող դրույթներ, ինչը չի կարող հիմնավորվել օբյեկտիվ հանգամանքներով: Առաջարկում ենք նախատեսել, որ նշված հաշվետվությունը ներկայացվում է Ազգային ժողով՝ սույն առաջարկների 4-րդ կետով առաջարկվող տարեկան հաղորդման շրջանակներում:</p>		
1.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ Հոդված 3	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում և հարակից օրենքների նախագծի առաջին ընթերցումից հետո ստացված առաջարկությունների, ինչպես նաև	Ընդունվել է	Ընդունվել է

		<p>«Հանրային ծառայության մասին օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ (Նոր նախագիծ) Հոդված 1</p>	<p>իրավապահ մարմինների հետ քննարկումների հիման վրա նախագծում առաջարկվում է կատարել հետևյալ հիմնական փոփոխությունները.</p> <p>Առաջարկվում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց կարգավիճակի հետ կապված հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով սահմանել առանձին ծառայության տեսակ, այն է՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն՝ համապատասխան փոփոխություն կատարելով նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի պետական ծառայության տեսակները սահմանող հոդվածում: Հարկ է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեում քննչական պաշտոններ զբաղեցնող անձինք հանդիսանալու են ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, օպերատիվ-</p>		
--	--	--	--	--	--

			<p>հետախուզական գործառույթներ  իրականացնող անձանց դեպքում առանձին  ծառայության տեսակ չսահմանելը  հանգեցնում է այնպիսի իրավիճակի, որ  հանրային ծառայության համակարգում  վերջիններս չեն ներառվում և օրենսդրության  տեսանկյունից ունենում են անորոշ  կարգավիճակ:</p>		
2.	Կառավարություն	<p>«Հակակոռուպցիոն  կոմիտեի մասին»  օրենքի նախագիծ  Հոդված 10</p>	<p>Առաջարկվում է «Հակակոռուպցիոն կոմիտեի  մասին» օրենքի նախագծով հստակեցնել  Հակակոռուպցիոն կոմիտեում սպասարկման  աշխատանքներ իրականացնող անձանց  կարգավիճակը և աշխատանքային  հարաբերությունների  առանձնահատկությունները:</p>	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	<p>«Հակակոռուպցիոն  կոմիտեի մասին»  օրենքի նախագիծ  Հոդված 11</p>	<p>Առաջարկվում է հստակեցնել  Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի  լիազորությունները, մասնավորապես՝ նրա  կողմից ընդունվող իրավական ակտերի</p>	Ընդունվել է	Ընդունվել է



			<p>շրջանակը, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի և նրա ընտանիքի անդամների անվտանգության ապահովման վերաբերյալ կարգավորումները և այլն (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը)</p>		
4.	Կառավարություն	<p>«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ Հոդված 14</p>	<p>Առաջարկվում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծում վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների պաշտոնների խմբերը և պաշտոններին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, Նախագծի 14-րդ հոդվածով ներդրվել է նոր՝ կրտսեր պաշտոնների խումբը: Ինչպես նաև վերանայվել են Կոմիտեի աշխատակիցների պաշտոնների դասակարգումը: (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող «Հակակոռուպցիոն</p>	Ընդունվել է	Ընդունվել է:

			կոմիտեի մասին» օրենքի նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը)		
5.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի Նախագիծ, Հոդված 15	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի Նախագծի 15-րդ հոդվածով առաջարկվում է հստակեցնել Կոմիտեում ծառայության անցնելու վերաբերյալ առկա սահմանափակումները, Կոմիտեում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջները: (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը)	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ Հոդված 16	Առաջարկվում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածում կատարել խմբագրական և բովանդակային բնույթի փոփոխություններ: (Մանրամասն	Ընդունվել է	Ընդունվել է

			տե՛ս, կից ներկայացվող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը)		
7.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ Հոդված 17	Առաջարկվում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծում վերանայել պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հետ կապված որոշակի դրույթներ:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	ՀՀ Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ Հոդված 18, 19	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի 18-րդ և 19-րդ հոդվածներում առաջարկվում է լրամշակել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի նշանակման նպատակով անցկացվող մրցույթի վերաբերյալ կարգավորումները: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին Մրցութային խորհրդի առաջարկած երեք թեկնածուների շրջանակից նշանակելու է ՀՀ կառավարությունը՝ նախկինում սահմանած ՀՀ վարչապետի	Ընդունվել է	Ընդունվել է

			փոխարեն: Նշված հոդվածներում կատարվել են նաև այլ փոփոխություններ (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը):		
9.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ Հոդված 24	Առաջարկվում է վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին պաշտոնից ազատելու հիմքերը:	Ընդունվել է	Ընդունվել է
10.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ Հոդվածներ 25-27	Առաջարկվում է նշված հոդվածներում իրականացնել խմբագրական և որոշակի բովանդակային փոփոխություններ: (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքում)	Ընդունվել է	Ընդունվել է

11.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ Հոդվածներ 28-36	Առաջարկվում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի 28-36 հոդվածներում կատարել խնագրական բնույթի և որոշ բովանդակային փոփոխություններ: (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքում)	Ընդունվել է	Ընդունվել է
12.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագիծ Հոդված 41	Առաջարկվում է վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կենսաթոշակային և սոցիալական ապահովության վերաբերյալ դրույթները՝ մինչև Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայության անցնելը կուտակած աշխատանքային ստաժի հաշվարկման վերաբերյալ կարգավորումները հստակեցնելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
13.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին»	Առաջարկվում է վերանայել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենքի նախագիծ Հոդվածներ 46-48	նախագծի անցումային դրույթները, հաշվի առնելով Հատուկ քննչական ծառայության լուծարման հանգամանքը, ինչպես նաև Նախագծում կատարված այլ փոփոխությունները: (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը):		
14.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծեր	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում և հարակից օրենքների նախագծերում առաջին ընթերցումից հետո առաջարկվում է իրականացնել մի շարք խմբագրական և տեխնիկական բնույթի փոփոխություններ:	Ընդունվել է	Ընդունվել է
15.	Կառավարություն	«Հատուկ քննչական ծառայության	Իրավապահ մարմինների հետ քննարկումների արդյունքում ձևավորված դիրքորոշման համատեքստում առաջարկվում	Ընդունվել է	Ընդունվել է

		<p>մասին»  հայաստանի  հանրապետության  օրենքն ուժը  կորցրած ճանաչելու  մասին» օրենքի  նախագիծ (Նոր  նախագիծ)</p>	<p>է լուծարել Հատուկ քննչական ծառայությունը՝  ուժը կորցրած ճանաչելով «Հատուկ  քննչական ծառայության մասին» օրենքը: Ըստ  այդմ, ամբողջությամբ վերանայվել են  «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի  նախագծի անցումային դրույթները:  Կոռուպցիոն հանցագործությունների  նախաքննությունը և գործերի բաշխումն  անխոչընդոտ իրականացնելու նպատակով  Նախագծով, որպես ժամանակավոր լուծում,  սահմանվել է, որ մինչեւ հակակոռուպցիոն  կոմիտեի ծառայողների մրցույթի  իրականացումը և դրա արդյունքում նրանց  պաշտոնի նշանակելը, Հատուկ քննչական  ծառայության քննիչները  ժամանակավորապես կնշանակվեն պաշտոնի  Հակակոռուպցիոն կոմիտեում: Մրցութային  կարգերի հաստատումից հետո ՀԲԾ  քննիչները այլ անձանց հետ հավասար  պայմաններում պետք է մասնակցեն մրցույթի:</p>		
--	--	---	--	--	--

16.	Կառավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծեր	«Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու արդյունքում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել մի շարք այլ օրենքներում՝ դրանցից հանել հատուկ քննչական ծառայություն բառերը: Մասնավորապես, առաջարկվում է փոփոխություններ իրականացնել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք», սահմանադրական օրենքում, «Հայաստանի Հանրապետության Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին», «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին», «Պետական կենսաթոշակների մասին», օրենքներում:	Ընդունվել է	Ընդունվել է
17.	Կառավարություն	«Քրեական	Առաջարկվում է ամբողջությամբ վերանայել	Ընդունվել է	Ընդունվել է



		<p>դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, հոդված 190</p>	<p>«Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի քննչական ենթակայությանն առնչվող հոդվածը: Նման փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է Հատուկ քննչական ծառայության լուծարմամբ, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի լիազորությունների շրջանակի հստակեցմամբ: Բուն մասնագիտացվածությունը ապահովելու համար առաջարկվում է Կոմիտեի ենթակայությանը հանձնել Քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն գործերի քննությունը: (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի հարակից նախագծի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը):</p>		
18.	Կառավարություն	«Պետական	Առաջարկվում է «Պետական պաշտոններ և	Ընդունվել է	Ընդունվել է

		<p>պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի նախագիծ</p>	<p>պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի նախագծում կատարել մի շարք փոփոխություններ: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների պաշտոնային դրույքաչափերը նվազեցնել, հավասարվելով այլ քննչական մարմինների ծառայողների պաշտոնային դրույքաչափերին: Միաժամանակ, սահմանվել է դրույթ, առ այն, որ ռիսկային առանձնակի բարդություններով, ինչպես նաև հատուկ մասնագիտացմամբ պայմանավորված՝ տարբեր մարմիններում պաշտոններ զբաղեցնող անձինք, կառավարության թույլտվության դեպքում, բացի օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափից և հավելավճարից, կստանան նաև հավելում: Ընդ որում, Հակակոռուպցիոն կոմիտեի դեպքում, որպես գործունեության լրացուցիչ երաշխիք, հավելում ստանալու հնարավորությունը և հավելման չափը</p>		
--	--	---	---	--	--

			<p>սահմանված է օրենքով, իսկ այլ մարմինների և պաշտոնների դեպքում կառավարությունն ինքը կորոշի նպատակահարմարությունը: Վերոնշյալը հիմնավորվում է այն առումով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելու համար առկա են մի շարք սահմանափակումներ, որակավորման առավել բարձր մակարդակ, այդ թվում՝ լեզուների իմացություն, բարեվարքության ստուգում, մրցութային կարգով աշխատանքի անցնելու պահանջ, բացի այդ՝ բարեվարքության պարբերաբար ստուգումներ Հակակոռուպցիոն կոմիտեում աշխատանքային գործունեություն ծավալելու ամբողջ ընթացքում: Այս մոտեցումը բխում է նաև Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 9-ին տրված թիվ 896/2017 կարծիքում արտահայտած դիրքորոշումներից: Վերոնշյալ դիրքորոշումը</p>		
--	--	--	--	--	--

			<p>թեև արտահայտվել է հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորների գործունեության շրջանակներում, սակայն հարկ է նշել, որ այն կիրառելի է հակակոռուպցիոն իրավապահ մարմիններում իրականացվող ծառայության նկատմամբ ևս, քանի որ անդրադարձ է կատարվում հենց մասնագիտացման ռիսկերով պայմանավորված առկա տարբերություններին: Մասնավորապես, Վենետիկի հանձնաժողովը վերոնշյալ՝ թիվ 896/2017 կարծիքով նշել է հետևյալը. (...)</p> <p>հակակոռուպցիոն դատարանի դատավորները պետք է ունենան իրավունք ավելի բարձր աշխատավարձի, քան առաջին ատյանի դատարանների ընդհանուր մասնագիտացման դատավորները, և պետք է նաև հաշվի առնել, որ նրանք աշխատում են կարևոր կոռուպցիոն դեպքերի վրա և կարող են հայտնվել արտաքին զգալի ճնշման տակ,</p>		
--	--	--	--	--	--

			ԵԴԽԽ-ն ընդունում է հատուկ վարձատրության հնարավորությունը, «եթե հատուկ հիմքեր կարելի է առանձնացնել, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ կա՛մ մասնագետ դատավորի մասնագիտության առանձնահատկությունները, կա՛մ նրա պարտականությունների բեռը (ներառյալ անձնական բեռը, որը կարող է լինել՝ ծագած մասնագետի գործառույթի յուրահատկությամբ) պահանջում են այդպիսի վարձատրություն» <sup>[1]</sup> :		
19.	Կառավարություն	«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության	Առաջարկվում է Հատուկ քննչական ծառայության լուծարումն ապահովելու համար Օրենքի 139-րդ հոդվածի 3-րդ մասում «հատուկ քննչական ծառայության» բառերը փոխարինել «հակակոռուպցիոն կոմիտեի» բառերով, ինչպես նաև ընթացակարգային բնույթ կրող այլ կարգավորումներ, (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող հարակից օրենքների նախագծերի՝ առաջինից	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենք	երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը):		
20.	Կառավարություն	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենք	Առաջարկվում է Հակակոռուպցիոն կոմիտեի համար նախատեսել լիազորություն կատարելու Օրենքով իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումները: Առաջարկվում է նաև օպերատիվ-հետախուզական առանձին գործողություններին վերաբերող հոդվածներում նախատեսել համապատասխան փոփոխություններ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գործառույթների իրականացումը ապահովելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
21.	Կառավարություն	«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում	Առաջարկվում է Օրենքի շրջանակներում Հատուկ քննչական ծառայության վերաբերյալ կարգավորումները փոխարինել Հակակոռուպցիոն կոմիտեին վերաբերող իրավակարգավորումներով՝ ապահովելու	Ընդունվել է	Ընդունվել է

		փոփոխություն և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենք	միաժամանակ Հատուկ քննչական ծառայության լուծարման և Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավերման հետևանքով վերաբերելի իրավական ակտի անհրաժեշտ փոփոխությունները:		
22.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին»	Առաջարկվում է Օրենքի շրջանակներում Հատուկ քննչական ծառայության վերաբերյալ կարգավորումները փոխարինել Հակակոռուպցիոն կոմիտեին վերաբերող իրավակարգավորումներով՝ ապահովելու միաժամանակ Հատուկ քննչական ծառայության լուծարման և Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավերման հետևանքով վերաբերելի իրավական փոփոխությունները: Առաջարկվում է նաև նոր խմբագրությամբ շարադրել Քրեական օրենսգրքի 342.2-րդ հոդվածը, ինչպես նաև լրացում կատարել Քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածում՝ դրանք համապատասխանեցնելով ՀՀ	Ընդունվել է	Ընդունվել է

			օրենսդրության փոփոխությունների:		
23.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Նոր նախագիծ)	Առաջարկվում է Օրենքի 82, 107, 126 հոդվածներում կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ ապահովելու Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների համար օրենքով նախատեսված սահմանափակումները, ինչպես նաև հեռացնելով Հատուկ քննչական ծառայության վերաբերյալ իրավակարգավորումները:	Ընդունվել է	Ընդունվել է
24.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության օրենքը «Հայաստանի Հանրապետության	Առաջարկվում է սահմանել իրավակարգավորում առ այն, որ Ծառայողական քննության ընթացքում հանցավոր դեպքի մասին տվյալ ձեռք բերելու դեպքում նյութերը պետք է ուղարկվեն Ազգայն	Ընդունվել է	Ընդունվել է



		<p>ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Նոր նախագիծ)</p>	<p>անվտանգության մարմիններին կամ Հակակոռուպցիոն կոմիտեին՝ հաշվի առնելով քննչական ենթակայության կանոնները, ինչպես նաև՝ այդ իրավակարգավորման հետ կապված այլ իրավակարգավորումներ: (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող հարակից օրենքների նախագծերի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը)</p>		
25.	Կառավարություն	<p>Հայաստանի Հանրապետության օրենքը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված</p>	<p>Օրենքում կատարվել է խմբագրական բնույթի փոփոխություն</p>	Ընդունվել է	Ընդունվել է

		անձանց պաշտպանության եվ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին (Նոր նախագիծ)			
26.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության օրենքը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Նոր նախագիծ)	Առաջարկվում է օրենքում Հատուկ քննչական ծառայության վերաբերյալ իրավակարգավորումները փոխարինել Հակակոռուպցիոն կոմիտեի վերաբերյալ իրավակարգավորումներով՝ ապահովելու Հատուկ քննչական ծառայության լուծարման և Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման հետ կապված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև	Ընդունվել է	Ընդունվել է

			ընթացակարգային բնույթի այլ փոփոխություններ:		
27.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության օրենքը «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին	Առաջարկվում է օրենքում Հատուկ քննչական ծառայության վերաբերյալ իրավակարգավորումները փոխարինել Հակակոռուպցիոն կոմիտեի վերաբերյալ իրավակարգավորումներով՝ ապահովելու Հատուկ քննչական ծառայության լուծարման և Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման հետ կապված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները: Առաջարկվում է նաև իրավակարգավորում նախատեսել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում Ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձանց վերաբերյալ բացառության մասով: Առաջարկվում է 19-րդ հոդվածի 7.1-րդ և 7.2-րդ հոդվածները վերախմբագրել, ինչպես նաև ընթացակարգային բնույթի այլ	Ընդունվել է	Ընդունվել է

			իրավակարգավորումներ (Մանրամասն տե՛ս, կից ներկայացվող հարակից օրենքների նախագծերի՝ առաջինից երկրորդ ընթերցումների ընթացքում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը):		
28.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության օրենքը Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին	Առաջարկվում է օրենքում Հատուկ քննչական ծառայության վերաբերյալ իրավակարգավորումները փոխարինել Հակակոռուպցիոն կոմիտեի վերաբերյալ իրավակարգավորումներով՝ ապահովելու Հատուկ քննչական ծառայության լուծարման և Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման հետ կապված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները:	Ընդունվել է	Ընդունվել է
29.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության օրենքը	Առաջարկվում է Հատուկ քննչական ծառայության լուծարմամբ պայմանավորված իրականացնել փոփոխություններ սույն		

		<p>«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին</p>	<p>օրենքի նախագծում: Սահմանվել են կարգավորումներ, որոնք Հատուկ քննչական ծառայության լուծարումից հետո հնարավորություն կտան սույն քննչական մարմնի աշխատակիցներին պահպանել իրենց կենսաթոշակի մասին իրավունքը: Բացի այդ կատարվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմամբ պայմանավորված այլ փոփոխություններ:</p>		
--	--	---	---	--	--